«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԵՎ ԿՈՍՈՎՈՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աննա Արզումանյան
ԵՊՀ, Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, մագիստրոս
anna94yan@gmail.com
Գիտ. ղեկ.՝ պ.գ.թ. Ռ.Կարապետյան

2008թ.-ի փետրվարի 17-ին Կոսովոյի ալբանական իշխանությունները միակողմանիորեն հռչակեցին երկրամասին անկախությունը, որին հաջորդեց Կոսովոյի ճանաչումը ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի կողմից: 2010թ-ի հուլսիսի 22-ին ՄԱԿ-ի Միջազգային դատարանը հրապարակեց շատ կարևոր որոշում: 10 կողմ և 4 դեմ հարաբերակցությամբ դատարանը վճռեց, որ Կոսովոյի 2007թ.-ի միակողմանիորեն հռչակած անկախությունը չի հակասում միջազգային իրավունքին1: Դատարանի որոշումը ողջունվեց ԱՄՆ-ի, ԵՄ առաջատար պետությունների, Ալբանիայի կողմից: Այն, սակայն, քննադատության արժանացավ ՌԴ-ի, Չինաստանի, Ադրբեջանի, Հունաստանի, Սերբիայի կողմից. վերջիններս հիմք ընդունեցին պետությունների տարածքային ամբողջականության անխախտելիության սկզբունքը: Այսօրվա դրությամբ Կոսովոն ճանաչված է 111 պետության կողմից: Եվ գլխավոր հարցը, որ ծագեց Կոսովոյի անկախության հռչակումից հետո, այն էր, թե արդյոք Կոսովոն կդառնա նախադեպ աշխարհում գոյություն ունեցող մի շարք չճանաչված պետությունների, այդ թվում և Արցախի Հանրապետության համար:

Կոսովոն ճանաչած երկրները պետք է մտավախություն ունենային, որ ճանաչումը կարող էր դոմինոյի էֆֆեկտ ունենալ և խաղաղություն ստեղծելու փոխարեն ապակայունացներ իրավիճակը նմանատիպ հակամարտություններով հղի տարածաշրջաններում: Բայց քանի որ Կոսովոյի ճանաչումը բխում էր ԱՄՆ-ի և ԵՄ առաջատար երկրների սոսկ քաղաքական և տնտեսական շահերից, ուստի նմանատիպ փորձերը խիստ վերահսկելի կլինեին և նրանք այդ առումով մտավախություններ չունեին: Վերջիններս բազմիցս նշել և նշում են, որ Կոսովոյի դեպքը բացառիկ է և չի կարող նախադեպ դառնալ որեվիցե հակամարտության համար2: Սակայն Կոսովոյի անկախության ջատագովները բավականին անհամոզիչ փաստարկներ են ներկայացնում Կոսովոյի բացառիկությունը ապացուցելու համար: Նրանց փաստարկների հիմքում ընկած են այն պնդումները, որ Կոսովոյի ժողովուրդը շարունակաբար հալածանքների և խտրական քաղաքա-կանության ենթարկվել սերբական իշխանությունների կողմից և արդարացիորեն իրացրել է իր ինքնորոշման իրավունքը:

Զուգահեռներ անցկացնելով Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրների միջև՝ տեսնում ենք, որ վերոնշյալ հիմքերը առկա են նաև Ղարաբաղյան հիմնախնդրում: Համեմատական վերլուծություն կատարելով՝ հանգում ենք մի քանի տարբերությունների, որոնք այս պարագայում Լեռնային Ղարաբաղի օգտին են՝

- Կոսովոն համարվում է սերբերի պատմամշակութային ժառանգությունը. չնայած այն հանգամանքին, որ ներկայումս

[1] Провозглашение независимости Косово. https://ria.ru/politics/20080827/150715662.html.
[2] Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հակամարտությունների ընդհանրություններն ու առանձնահատկությունները,, Երևան, 2007թ,

ալբանացիները արհեստականորեն մեծամասնություն են կազմում[1]:

- Լեռնային Ղարաբաղի հայերը մշտապես բնակվել են այդ տարածքում, մինչդեռ Կոսովոյում ալբանացիները եկվորներ են:
- Լեռնային Ղարաբաղի տարածքը ոչ պատմականորեն, ոչ մշակութային առումով չի պատկանել Ադրբեջանին: Մինչդեռ Կոսովոն պատկանել է Սերբիային: Այս առումով Ադրբեջանի պահանջատիրությունը Ղարաբաղի նկատմամբ զուրկ է բոլոր իրավական հիմքերից:

Ակներև է, որ Կոսովոյի «բացառիկության» ամրապնդմանն ուղղված ջանքերը բխում են միջազգային քաղաքական զարգացումներից և այն ճանաչած երկրների քաղաքական և տնտեսական շահերից: Արհեստականորեն անջատելով Կոսովոն Սերբիայից՝ Արևմուտքը նախ և առաջ նպատակ ուներ թուլացնելու ՌԴ դաշնակցին և զրկելու ՌԴ-ին Բալկաններում ունեցած ազդեցության լծակներից: Կոսովոյի նկատմամբ վերահսկողության սահմանումը հնարավորություն տվեց ԱՄՆ-ին և նրա դաշնակիցներին վերահսկելու նաև էներգետիկ, տրանսպորտային միջանցքները: 1998թ-ին Կոսովոյում ռազմական գործողությունների սկսելուց 3 շաբաթ անց գեներալ Մայքլ Դեյվիդ Ջեքսոնը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ. «Մենք, ամենայն հավանականությամբ, դեռ երկար կմընանք այստեղ, քանզի մենք պետք է ապահովենք այս տարածքով անցնող էներգետիկ միջանցքների անվտանգությունը»:

Խոսքը 8-րդ միջանցքի «Արևելք-արևմուտք» ուղղության մասին էր, որով պետք է անցներ Սև և Ադրիատիկ ծովերով Կենտրոնական Ասիայի էներգառեսուրսները Եվրոպային մատակարարող գազատարը[2]: Բացի վերը նշվածներից, Կոսովոյում իր սեփական նպատակներն էր հետապնդում հենց ԱՄՆ-ն, որի համար Կոսովոյի հովանավոր դառնալը Եվրոպայում սեփական ազդեցությունը մեծացնելու հիանալի հնարավորություն էր: Այսպիսով, կասկածից վեր են այն պնդումները, որ Կոսովոյի անկախության ճանաչման հիմքում ընկած են գերտերությունների աշխարհաքաղաքական շահերն ու հետաքրքրությունները:

ՌԴ-ի և Արևմուտքի շահերն առավելապես սուր կերպով բախվում են Կովկասյան տարածաշրջանում: Մեծաքանակ էներգակիրների առկայությունը տարածաշրջանում էլ ավելի է մեծացնում վերջինիս կարևորությունը գերտերությունների համար[3]: Կոկասյան հիմնախնդիրներից ամենից շատը հենց Ղարաբաղյանն է առնչվում այս գործոնին: Այդ պատճառով էլ արդեն տևական ժամանակ է, ինչ հակամարտությունը գտնում է ԱՄՆ-ի և ՌԴ-ի ուշադրության կենտրոնում4: Նրանցից յուրաքանչյուրն այստեղ առաջնորդվում է սեփական շահերով: Մասնավորապես, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության գերակա խնդիրներից է պահպանել իր ռազմական ներկայությունը տարածաշրջանում և ոչ մի պարագայում թույլ չտալ Ռուսաստանի դերի մեծացումը: ԱՄՆ-ի համար

---

[1] Сидди М., Абхазия, Косово и право на отделение, «Центральная Азия и Кавказ», Том 14, Выпуск 1, Эдинбург Швеция, 2011

[2] Коллон М., Нефть, PR, война. Глобальный контроль над ресурсами планеты, Москва 2002, с. 108

[3] Фридрихсон Н.,Политика США и России в вопросе урегулирования Нагорно-карабахского конфликта: формирование новых трендов, Журнал "Кавказ и глобализация" 2012, Москва, с. 29.

[4] Кардумян В., Карабахский конфликт в контексте российско-американских отношений, Центр Кавказских исследований МГИМО, Москва, 2009, с. 156.

Ղարաբաղյան հիմնախնդիրը հարմար առիթ է Ադրբեջանի և Թուրքիայի գլխին մտրակ ճոճելու և վերջիններիս իրենից կախվածության մեջ պահելու համար:

Իր հերթին Ռուսաստանը ևս շահագրգռված է հակամարտության կարգավորմամբ, և նրա անմիջական շահերից է բխում վերջինիս երկարաձգումը: Հակամարտող կողմերին սպառազինություն մատակարարելով՝ Ռուսաստանը փորձում է պահպանել ազդեցության իր լծակները Հայաստանի և Ադրբեջանի վրա: Ռուսաստանը ձգտում է հաստատել քաղաքական, ռազմական, տնտեսական հավասարակշռություն հակամարտող կողմերի շրջանում՝ ավելացնելով նրանց կախվածությունն իրենից[1]:

Այսպիսով, համեմատական եզրեր անցկացնելով Կոսովոյի և Ղարաբաղյան հակամարտությունների միջև՝ կարող ենք հանգել հետևյալ եզրակացությանը. Ղարաբաղյան հիմնախնդրին բնորոշ է անկայունությունն ու անորոշությունը, քանի որ չկան լուրջ հիմնավորումներ, որ կարճաժամկետ կամ երկարաժամկետ հեռանկարում կգտնվեն լուծման այնպիսի օպտիմալ տարբերակներ, որոնք երկկողմանիորեն ընդունելի կլինեն: Խնդրի կարգավորմանը խոչընդոտում են ինչ-պես խնդրում որպես միջնորդ ներգրավված երկրների, այնպես էլ ադրբեջանական կողմի՝ խնդրի խաղաղ կարգավորմանը հասնելու անպատրաստակամությունը: Մինչդեռ Կոսովոյի խնդրի լուծումն այնքան էլ անհեռանկարային չէ: Դրան նպաստող թերևս գլխավոր հանգամանքը կողմերի՝ փոխզիջումների գնալու պատրաստակամությունն է: Սերբիան ներկայումս մեծապես ձգտում է ինտեգրվել Եվրոպական Միությանը, այդ իսկ պատճառով էլ պետք է լուծի իր բոլոր տարածքային-սահմանային վեճերը: Հետևաբար, Կոսովոյի հետ հարաբերությունների շուտափույթ կարգավորումը բխում է հենց Սերբիայի շահերից:

Կոսովոյի հիմնախնդրի կարգավորման գործընթացի գլխավոր առանձ-նահատկությունն այն է, որ առաջին անգամ հակամարտության ելքը որոշվեց առանց հակամարտող կողմերից մեկի համաձայնության: Թերևս այս առումով այն չի կարող նախադեպային լինել Ղարաբաղյան հիմնախնդրի պարագայում: Այն նախադեպային կարող է լինել ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման տեսանկյունից, սակայն ոչ ձևաչափի առումով:

Կոսովոյի անկախության ճանաչումը քաղաքական նպատակահ-արմարությունից բխող որոշում էր, և Ղարաբաղյան հիմնախնդրի դեպքում կիրառելի կլինի միայն այն պարագայում, եթե իսկապես բխի գերտերությունների շահերից և տեղավորվի նրանց հետաքրքրությունների շրջանակներում:

[1] Благодатских И.М. (ред.) От самоопределения к международному признанию: Абхазия, Нагорный Карабах, Приднестровье, Южная Осетия, Тирасполь, 2008, с. 15

Աննա Արզումանյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԵՎ ԿՈՍՈՎՈՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ *Արցախ, Կոսովո, Սերբիա, ինքնորոշում, էներգառեսուրս*

Այս հոդվածի հիմնական նպատակն էր ուսումնասիրել միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկի՝ ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառելիությունը ժամանակակից միջազգային հարա-բերություններում և պարզել դրանց հանդեպ երկակի ստանդարտների կիրառման նախադեպերը: Տվյալ հոդվածում ուսումնասիրվել են Կոսովոյի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունները: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության պարագայում գերտերությունները, առաջնորդվելով բացառապես սեփական քաղաքական և տնտեսական շահերով, անտեսում են Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

Анна Арзуманян

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ КОНФЛИКТОВ КОСОВО И НАГОРНОГО КАРАБАХА

Ключевые слова: *Арцах, Косово, Сербия, самоопределение, энергоресурсы*

Основная цель этой статьи исследование одного из основных принципов международного права – применяемость в современных международных отношениях права на свободное волеизъявление и самоопределение народов и выявить прецеденты применения двойных стандартов в отношении них. В данной статье были исследованы конфликты в Нагорном Карабахе и Косово. В результате данного исследования выясняется, что в случае Нагорно-Карабахского конфликта мировые державы, преследуя исключительно свои политические и экономические интересы, игнорирует право народа Арцаха на самоопределение.

Anna Arzumanyan

COMPARATIVE ANALYSIS OF KOSOVO AND NAGORNO KARABAKH CONFLICTS

Key words: *Artsakh, Kosovo, Serbia, self-determination, energy resources*

The purpose of this article is to examine one of the fundamental principles of international l law, self-determination of the peoples, and to find out the cases of implementation of double standards regarding this principle. In this article, the conflicts of the East Timor and Nagorno Karabakh have been examined. As a result, we can state that in case of the Nagorno Karabakh conflict the superpowers, pursuing exclusively their political and economic interests, ignore the right of people of Artsakh to self-determination.